Լոռու մարզպետարան
Լոռու մարզպետ Անդրեյ Ղուկասյանին
Շուշանիկ Միսկարյանից
«Վանաձորյան խճանկար» շաբաթաթերթ, Ք. Վանաձոր, Թումանյան փող., 6ե շենք
+37494947923, miskaryanshushanik3@gmail.com

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Ղուկասյան,

Համաձայն 2015թ.-ի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 42-րդ եւ 51-րդ հոդվածի եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 9-րդ հոդվածների՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ ՝ կոռոնավիրուսային հիվանդության քանի՞ դեպք է հաստատվել Լոռու մարզում, փաստացի բուժվողների թիվը քանի՞սն է: Վարակակիրներից քանի՞սն են ապաքինվել: Արձանագրվե՞լ է մահվան դեպք Լոռու մարզում, և եթե այո, ապա ի՞նչ ուղեկցող հիվանդություններ է ունեցել պացիենտը և քանի՞ տարեկան է եղել: Վարակակիները մարզի ո՞ր համայնքներից են: Ինչպիսի՞ վիճակում են հիմա վարակիները Լոռու մարզում՝ նրանցից քանի՞սն են ծայրահեղ ծանր վիճակում, քանիսը՝ ծանր և կա՞ն պացիենտներ, որոնք շնչում են արհեստական շնչառական սարքի օգնությամբ: Սահմանափակումների մեղմացումից հետո, մարզում որքանո՞վ է պահպանվում հակահամճարակային կանոնները, օրինակ, եթե հաշվի առնենք նաև, որ հատկապես բանկերի դիմաց չի պահվում սոցիալական հեռավորությունը: Ինչպիսի՞ վիճակում են Վանաձորի թիվ մեկ պոլիկլինիկայի ութ աշխատակիցները, որոնք մեկուսացվել էին կոռոնավիրուսով վարակված անձի հետ կոնտակտ ունենալու պատճառով:

Խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:
Խնդրում եմ ծանուցումը ուղարկել էլեկտրոնային տարբերակով:

Կանխավ շնորհակալ եմ
13.05.2020թ.